կը սովորեցնեն որ աս վարձքը ու պատիժը աս կեանքիս մէջ ալ կրնամ ունենալ. բայց սուրգապէս անդին պէտք ունենամ՝ որ անվախճան է. աս վարձքս պէտք ըլլայ դերադոյն ճշմարտութիւնը ճանչնալը, որ է Աստուած, զինքը կատարելապէս սիրելն. ուզածն ուզելը, ու բարիներուն հետ կատարեալ սիրով զինքը յաւիտեան ժառանգելը։

Հ. Ի՞նչ զեմ որ էս ալ առանկ վարձքի մը արժանի ըլլամ։

Ադոյ ի՞նչպէս կրնամ զայն ձեռք բերել։ — Ապաշխարի ու քաղաքակիրթ պատանիի մը պէս ապրելով։

Պիոյ Ղարա-Նալ-ի։

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Հայաստանեայցս սուրբ Եկեղեցւոյ վարդապետաց մէջ ամենափառաւոր կարգ ու տեղի գրաւած է սուրբ Հայրապետն մեր Ներսէս, որ մականուամբ Շնորհալի կը կոչուի։ Որքա՜ն ուղղափառ հաւատքը, նորա հոգեկիր վարդապետութիւնները, նորա առ Բրիտանացիսն սուրբ եկեղեցին Ռուսաստանի ունեցած ջերմեռանդութիւնն և ուղղափառ հաւատքը յայտնի են ամէն անոնց՝ որոնք անգամ մի գէթ աչքէ անցուցած ու կարդացած են նորա տեսակ տեսակ երկասիրութիւնները, որոնց շատերն հիմա ու հաստատութիւն կը համարին մեր Ռուսաստանի սուրբ եկեղեցւոյս ուղղափառ դաւանութեանը։ Անոնց մէջ նշանաւոր են այն թղթերը, զորոնք յունական և հայկական եկեղեցեաց միաւորութեան խնդրոյ պատճառաւ գրեց ի Կոստանդինուպոլիս առ Մանուէլ Կայսր, և առ Միքայէլ Պատրիարքն Յունաց։

Այն նամակներուս մէջ այն կէտերուն վերայ միայն խօսեցուած են, ուրոնցմով յիշեալ երկու եկեղեցիները կը տարբերին իրարմէ. վասն որոյ ընդհանուր եկեղեցւոյ ընդունած շատ մի ճշմարտութեանց և ուղղափառ մասերու վերայ չխօսելովը, չըլլայ թէ ուրմանց տկարամիտ անձինքներու կասկած տայ, որպէս թէ սուրբ Հայրապետն Ներսէս զանոնք լռութեամբ անցնելովը՝ մերժած է և չէ ընդունած. քա՜ ի՜նչի. Վասն զի եթէ յիշեալ թղթոյ մէջ ի մասնաւորի խօսեցած չէ եկեղեցւոյ ի սկզբանէ անտի քրիստոնէութեան ընդունած հաւատալեաց վերայ, սակայն ուրիշ շատ առիթներու մէջ յայտնած է իւր ուղղափառ խոստովանութիւնը բոլոր այն հաւատալեաց կէտերու մէջ, զորոնք կ'ընդունի այսօր Հայաստանեայց Ս. եկեղեցին։ Ինչէ՞ կը հետեւի թէ ի՞նչ սպանդակ և խորամանկ խորհուրդ մի է այն, համարել թէ որքան Ներսէսի յիշեալ թղթերուն պարունակութիւնը համաձայն է երեք եկեղեցեաց դաւանութեանը հետ, այսինքն Յունաց, Լատինաց և Ռոմբական։ և այս օրինակ խորամանկ վարդապետութեամբ դաւանակից ընել զսուրբ Հայրապետն Ռոմբական եկեղեցւոյ հետ։ Ինչպէս՞ որ թողուցեր նորա միւս գրքերը և եկեղեցական և հաւատոյ վերաբերեալ ճառերը, այնչափ շարականները, որոնց մէջ յայտնապէս և անպատրուակ կը ցուցնէ իւր ուղղափառ դաւանութիւնը և ուրիշ շատ ճշմարտութիւններ և առաքելական աւանդութիւններ ընդունիլը, զորոնք միշտ մերժած են Ռոմբականք։

Ռոմբ իւր գործքերուն մէջ պայծառ կը փայլէ իւր հոգին որ վառեալ էր սիրով իւր ազգային եկեղեցւոյն. և իւր յարգանքը՝ որով կը պատուէ

digitised by A.R.A.R.@

գոռ-բրերը, ջերմեռանդ սիրտը՝ զոր ցոյց տուած է զանազան գովեստներով առ ամենօրհնեալ և միշտ սուրբ կոյսն Աստուածածին մայրն Յիսուսի. ասոնցմէ մին է հետապայ տաղը, զոր հին գանձգրքէ հանուած ենք, և որոնակրնեստուերն իւր անուանը կը յօդեն։

Տաղ՝ Բերդ Աստուածածնի Տէրունի։

Այր եղեմ բանաւոր ոնկոյն,
Նոր Աղամն իբրէն՝ հնոյն նորոգօղն։
Երկակի գիտութիւն ի միտ,
Անքակ միութիւն ի մին ընդ եղաւն։
Ներեալան արիւնս առաջեալ,
Զմինն մարմնապէս ծընաւ վերստին։
Միրամարդ ոսկեսիպ ներկար,
Տաղաւակ ողջախոհ, մաքուր ազատնին։
Յրեւեալ ծաղիկ գարնայնոյ,
Վարդ, մանիշակ, քրքում ժ, շուշան վայելուչ։
Սարդէոն, յակինթ, դահանակ,
Յասպիս, կարկեհան, զբմրուխտ,
Շափիղայ։
Ի տիպ ի նոյն վակասին յեռեալ,
Կայծ և ոսկեղէն՝ նոյն Աստուածին։
Երկնագոյն օգտմանուած շար,
Բեհեղ և ծիրանի, նիւթ նոր խառանիդ։
Բակերտեալ համատեռիցս ելք՝
Ընդ քեզ վերաբերել առ ի քէն ծագումն։
Գոչելով զեռահիւսակ նրաագս
Երիցն ի միումն՝ յաւէժ միշտ բգփառս։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ինչպէս անցեալ դեկտեմբերի ամ. տասներեքին մէջ ծանուցած էինք, ներ. կայ ամսոյս 3 ին սկիզբն տուին սուրբ Յարութեան Տաճարի դմբէթին նորոգութիւնը։ Հանար բլրակի պատրաստութեանց։ Այն օրը Ռուսաց և Գաղղիոյ մեծապատիւ Հիւպատոսներն անձամբ իջան ի սուրբ Յարութիւն, և գերեզմանին ճակատն եղած շարժական զարդերն ու մանակալները և կանթեղները հանելով, և թէ զանոնք և թէ պատուանաստեղոյն վերայ աշտանակ ու կանթեղ զամենքն ի գիր առնելով, և իւրաքանչիւր ազգ քանի կանթեղ և ուր ինչ զարդ ունենալը նշանակելով՝ երեք օրինակ ըրին, իւրաքանչիւրն ալ կնքեալ տալով սուրբ Յարութեան Տաճարի երեք ազգաց Հայոց, Լատինաց և Յունաց տեսուչներուն, երկուքը Ռուսաց և Գաղղիոյ հիւպատոսներուն և երրորդը տեղւոյս կառավարութեան քով պիտի պահուին։ Յետ այնորիկ ակսան սանդուղները (խիկէլ) կազմել, որոնց նիւթերը, այսինքն՝ մարդակներն ու երկաթի գամերը բոլոր՝ հանդերձ թըւանշաններով Լիւրոպայէն եկան. և կը կարծուի թէ այս կազմածները մինչեւ սուրբ Օսանի հազիւ կը լրանան։ Բայց այս հանդերձանքները բնաւ արգելք եղած չեն ուխտաւորաց իրենց ուխտն ու երկրպագութիւնը կատարելու թէ ամենասուրբ Գերեզմանին մէջ և թէ միւս մասերուն մէջերը։

— Անցեալ դեկտեմբեր ամսոյ 14 ին հասան ի սուրբ քաղաքս Աշուն սուրբ Կարապետի վանաց միաբանները։

Արիստակէս վարդապետ Ղրիմեան Աղեքսանդրուպոլսեցի.

Խորէն վարդապետ Շահնազարեան Աշեցի.

Նասրի վարդապետ Ղեւոնդեանց Աշեցի.

Յակոբ վարդապետ Գրիգորեան Քաջբերունի.

Գաբրիել վարդապետ Խաչատուրեան Չինուշցի.

digitised by A.R.A.R.@